

ՀԱՊՏԵՐ ԳԻՈԳԻՆԵԱՆ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ

ՀԱՊՏԵՐԻ իւրաքանչիւր արջանը 60 օգինուկ է
Շըշանին զին և գաւհեկան ԿԱՆՅԵՒՆ 40
Գաւառուց համար 50
Կիսաշրջանին 25

Զեռքէ հատց փարա 40
Նամակ կոմ և է զրութիւն պէտք է ուղղել
առ Տիորէն և Տէր Արամ Աշխեան Կ. Պօլի
Կառավարական խան վերի յարկ թիւ 7 :

Ա. ՏԱՐԻ Ա. ՇԲՋԱՆ

1888 ԱՊՐԻԼ 23

ԹԻՒ 21

ՀԵՌԱՔԲԱԼՈՒՐՓ

(ԱԺԱՆՍ ԴԻՌԻՒՆԵՍ)

Խւակիւտար 17 Ապրիլ

Խունտախանետելու թիւնք դադ-
թեցն : Արտշուած է շոյրել այրած
տեղերն :

Գատը-Քէօյ Ապրիլ 18

Իրիկուան գէմ

Գայըշ-Ճաղիի ջուրերը քալել
սկսան . սաքի փոխառութիւն կա-
տարուած է մարդկային սեռէն :
Զբհեղեղէ կը վախցուի :

Եհնի-դարու , նոյն թուական

Թաղականի կոխները դադրե-
ցան : Զինադադար կայ :

Վերջին վայկենին հասած

Թօփդափու , Ապրիլ 20

Թատիքեային դինը ինկաւ, հին-
տիպայինը ելաւ , կը վախցուի ո՞ր
նորէն առջինը ելլայ , ետքինը իյ-
նայ :

Հրապարակէն

Ապրիլ 22

Լուրիան , բակլան և պէօհրիւ-
ճէն յուսահատական վիճակի մէջ են:

Ապրիլ 23

Տխուր վախճան , վերջապէս մեռան
այդ ընդեղէնք :

Նոյն թուական

Հաւկիթը կարմրեցաւ, վաղը
կամումնանաց :

Նոյն թուական

Այս իրիկուն կը բացուի ու
տելեաց մեծ ցուցահանդէսը իտունա
հայկական :

ՄԵՍՐՈՊԵԱՆ ԱՐՏԱՍՅԱՆՈՒԹԻՒՆ

Ի ՎԱՐԺԱՐԱԿԱՆ

— — —

Մայրաքաղաքիս թէ շրջակաւ
յից, չեմք գիտեր լու մը, Ազգ,
վարժարաններէն միոյն պատ, գուս-
տիարակն, նախանձախնդիր հայե-
րէն տառից ուղիղ արտասանու-
թեան, լու եւո, մի ուրիշ սխալ
արտասանութեան, անցեալ օր փոր-
ձել սկսած է նորոդ յանձնարար-
ուած ուռասհայոց արտասանու-
թիւնն ուսուցանել աղյոց «Միւ-
րոպեան Արտասանութիւն» ան-
ուան տակ :

Դաստիարակն . . . Բարոն, մի
խաւսիր, կլուխո քը ճախճախեմ:

Ռւսանողն . . . ի՞նչ, միւսիւ, ի՞նչ
միւսիւ :

Դաստ. — Մի՛ խաւսիր քըսեմ:
Ռւսան. — Չեմ հասկնար կոր,
միւսիւ, ըսածդ, , առաջ ասանկ չէ-
՞ք խօսեր :

Դաստ. — Այս՝ առան սխալ քը
խաւսէինք, պայց այսուհեղեւ ու-
ղիղ. բեղք է առոք ալ ինծ հե-
ղեւիք.

Ռւսան. — Մի քանի հոդի ի մի
բերան . . . Միւսիւ, միւսիւ, մեզի
ալ կը սովորեցնէ՞ք, ածդ ուղիղ ար-
տասանութիւնը, շատ թօհափ է .
կարծես թէ նոր լեզու մ'է :

Դաստ. — Էնդ հաքառարը մեր
պուն և հին արդասանութիւնն է .
Այս՝ ծեղի ալ քը սորմեցնեմ. սա-
քայն տուք ալ հանալու էք ուսնիլ .

Ռւսան. — Այս՝ միւսիւ, այս
միւսիւ :

Մի ուսան. — Միւսիւ, միւսիւ,
Օլէնտօրֆ կը կարգամ կոր . ի՞նչ-
պէս ըսելու է :

Դաստ. — Աւ զիենդաւրփ քը քար-
տամ քոր :

Ռւսա. — Փորձելովլ Աւզպէն . . .
աւզպէն . . . դափրափ . . . դափ-
րափրափ . . . դարմիրք . . .

Դաստ. — Զըլլար քոր դայք :

Ռւսա. — Միւսիւ, լիզունիւ քը
դառնար կոր :

Դաստ. — Քիցէք ագոր քա-
նանը սովորեցնեմ ծեղի, տուք ինք-
նիքեննուա կացէք, սովորեցէք :

Ռւսան. — Այս՝ միւսիւ, Այս
միւսիւ :

Դաստ. . թ. գ. գ. կրերը բեղի
արդասանէք՝ Պէն, կիմ, ջա . գ. կ.
Ճ. կրերը բեղի արդասանէք՝ Բէն,
Քէն, Կիւն, Զ. Զ. Ճ. կրերը՝ Ծա,
Ճէ, Ճէ. Փ կիրն ալ՝ Ֆէ. Յ կիրը
և ի ծայն բեղի հանէ, քամ պնաւ
Միդի քարգացուի: Աղուք անուն-
ներու. մէն լ կիրը բեղի ֆոխուի Ղ
կիրի. Օ ին դեղ ալ կորձաձելու է
Ահ: Աւն, ծեղ դեմնեմ:

Ռւսան. — Աւնը ի՞նչ է միւսիւ,

Դաստիարակութեան պահի քարտայինք :

Աւատ - Հայ, հայ, միւսիւ, օպիտի կարգայինք :

Այս միջոցին պատուարժուն կամ ազժանապատճի հայութաբանաւթեան մասնամենքին մին ներս կը մտնէ, որ վարժարանին մէջ դասխօս աելու ալ որոտին ունի, աղոյք անմիջապէս վրան կը թարին :

Աւատ - Էփիքնդի, էփիքնդի աւզինկառ ունին չենք սովորած բիդինը կրենք առ ք է քաք :

Հոդ ար - շուարած - Պորո՞ն գաստիարակի, ի՞նչ կրանն առնք, երեկ որսորէս չը թողուցի զիրենք, մի գուցէ . . .

Դաստ - Աչ, էփիքնդի, երեքունէ այս առ մէճ առանձափառ թիւն մը ըստած են այսու Աւգիզ քը խաւոին, ազիզ քարդասնեն :

Հոդ արարձու էփինտին աւանելով որ այս սաւկորի ամառը միրեն ի վար գամենն ըն ալ բանած է, գուցէ և վոհնուրով թէ բնքն ալ վրտանդի մը կենթարկի. դասն ալ կը թողու և կը փախչի : Ցպոյքն ի վոր կը գոչէին ետեւէն . Էփիքնդի էփիքնդի, տաս չըիդի առնենք այս առը :

ԳԻՐԴԻՆԴՄԻ ԵՐԱԾՆԵՐԸ

Բ.

Առաջին երազիս պատմութենէն ի վեր, ովք ազնիւ առնենդիր, չուեսնուեցանք քեզ հետ, արդա-

րեւ սկառք էր խոստումն պահէի, բայց ի՞նչ օգուտ մարդ երթեմն իւր կամքէն չկախուած - գոփանուկ անկախի - պատճառներով, կատիպուի հակառակին գործել, օրինակի համոր, ուտիլու երթարու աեղ խըմբւ կերթայ, քնանալու երթարու տեղ փողացները մոթին մէջ որոտելու կերթայ, և այս ամենը կընէ, սրպէս ըսինք, կարծեմ, բոլորապէն կամքէն չկախուած պատճառներով:

Ես՝ Դմոդինէս ալ, մի ոյսպիսի պատճառաւ, որ անկախ է, ուշցուցի քեզ հետ տեսնուիլս, և երանիներուս պատճութեանց շարունակութիւնը ընդմիջեցաւ առ ժամանակ մի, զի անցցէ բարկութիւն ցեառն :

Գլխուս գագաթին ամենաբարձը մազէն բաներով մինչեւ ուարիս ըզունդները թաթխուած էի հարբուխի մէջ, շատ բժիշկներ եկան այս միջոցին տունս, շատ բժիշկներ ալ զային, տրամարանական է այս եթէ շատ բժիշկներ գային, շատէ, ալ սփոտի երթային, ուստի կը խընդրեմ որ շտախօսութիւն չհամարուի ըստ :

Այս բժիշկներէն մին, որ եկողու երաքը գացողներուն մէջ է, ըստ թէ կը մեռնիմ, ուրիշ մալ ըստ թէ կապրիմ, վայք Աստածոյ. երկուքին ալ ըստը չեղաւ, որպէսնու հիմա ո՛չ մեռած եմ, ո՛չ ողջ, այլ կենդանի մեռեալ մը, որ և ո՛չ մէկ բժշկի մը մաքէն կանցնէր :

Երկուրատեւ ճամբարդութեանս մէջ պատահեցաւ որ շատ անգամ ներ թշուառութեան մասմասիմ, պատահեցաւ որ չընթրած անկողին մոնեմ, պատահեցաւ ալ որ անկողին ալ չգտնեմ, Մի այսպիսի պատահարի օր մը, երբ քսակս պարապ, փորս անօթի կը շընէի ծովերքի մը մօտ, երկոյնահասակ՝ գլխարկաւոր անձ մը մօտեցաւ ինձ, և առաջարկեց որ իւր փոքրիկ արկղը տանիմքիչ մը հեռու դժոնուած տուն մը, որ, կըսէր թէ ինը էր, թէ պէտ պէտք չունէր այս բացարդութիւնն ինձ տարու, սակայն կերեւայ թէ հարկ կզդար կասկած չյարուցանելու համար ի ներքս ի յիս:

Ըսդունեցայ առաջարկն, բնոր շալկեցի և ուզզուեցայ գէպի որոշեալ տեղն, ինքն ինձի շընկերացաւ կերեւայ թէ աչքիս մէջ կարդաց հաւատարմութիւնս, ինչպէս որիահար մը իւր սիրուհոյն երկնտկապօյտ ականողեաց մէջ կը վերծանէ, եթէ քիչ մը տիխաթ ընէ, անհաւաարմութիւնն:

Մարդն բասած էր ինձ թէ այդ տունն մօտ էր, բայց որչափ կը յառաջանայի կարծես տունը կը փախչէր, և այն բեռն ալ աւելի կը ծանրանար ուսոցս վրայ, եթէ սովորական բեռնակրաց պէս ըլլայի, արխալըն մը պիտի ունենայի անշուշտ, և չպիտի տանջուէի այնչափ,

կերթամ կերթամ չհասնիր ճանապարհն, բայց ահա Աստուած մօրս բայի մը կը հանէ գիմացս, օրհնեալ քար, որ այնքան անօգուտ կը

թուի բաղմաց, կամաց մը բեռս կը դնեմ անոր վրայ և ես ալ կը հանգչիմ քովիկը, Այս վայրկենին արխուու մոտածութիւնը կը յափշտակեն զիս, զոր օրինակ բանաստեղծ մը կը յափշտակուի քաղցրիկ այլ անցեալ վայրկեաններու Քայլապակոց մէջ, կը թմրիմ, կզդամ թէ զօրութիւնս առ տակաւ կը հեռանայ ինէ, կը վախնամ որ կը մեռնիմ, ինչ դառն է օտարութեան մէջ մեռնիլը:

Բայց ոչ, Աստուած ամենուրեք է, ահա կը համնի ինձ :

Աչքու գոցելու վայրկենին տեսայ մէկը որ հեռուէն զիս կը դիտէր, հետաքրքրութիւնս շորժեցաւ . բայց աչերս, այո՛, այդ մարդն զիս կը կոչէր նշանացի, ելոյ, մօտեցայ իրեն, հրէոյ մ'էր, բարեկեցիկ մարդ մը, որովհետեւ լու հագուած էր: Արդահատանօք ձեռքէս բռնեց և այսպէս խօսեցաւ . Ավ աղնի մարդ, կերեւայ թէ շատ տառապած ես, կը գթամ վրադ, և կուզեմ օդուակար ըլլալ քեզ, հաւատա խօսքիս :

Եւ զայս բաելով բանեց ձեռքէս գորովմնօք: Համբութեցի այդ ձեռքը, որ պատրաստ էր օգնելու ինձ, և գոչեցի . ինչ ընելու եմ:

— Պատամիանեց, ինչ որ ըսեմ պիտի կատարես, հարուստ պիտի ըլլաս, և ես ի փոխարէն ուրիշ բան չեմ խնդրեր, բայց փոքրիկ գրամական հատուցում մը, ինչ որ կը կամիս, ինչ որ կը թելադրէ քեզ սիրու:

— Այս՛, գոչեցի, եռանդադին

ինչ որ ըստս պիտի կատարեմ, ահա թշուառութեան ծոցին հարած եմ:

— Իշխանազուն հարուստ մը կը բնակի քաղաքիս մէջ, խիստ հորուստ, երեւակայութենէ վիր հարուստ . . . և այս հարուստը մէկ հասիկ աղջիկ մ'ունի, սիրուն, սիրուն, գեղեցիկ և պարզմշտ, երկու քն խմիտախն կը բնուկին դրախտանման պալատէ ջներով շրջապատռած սքանչելի վիլայի մը մէջ, և իրենց կապատուորեն անթիւ ծուռայներ, կառքեր, ձիեր, ջորիներ և էջեր: Մեծ պատու է ինձ որ այդ երեւելի հարուստին սեղանաւորն եմ:

Անցեալ օր խոսակցութեան մը միջոցին յայտնեց ինձ թէ սացիին ամուսնացունելու մասգիր է, և կը բնածոէ առայգ, կարսի և ժիր երեսաստրդ մը, հոգ չէ թէ հարուստ շըլլայ, կը բաւէ որ կըսէ բոլորովին գասափարտիւթենէ զուրկ Անի: Մեծահարուստ այդ անձին այս խոռքըն մոքիս մէջ տպաւորուած է, և կը բնուտէլի, շխտակը ըսելու համար, մի այնպիսի երիտասարդ, որ կատարելատէն համապատասխանէլ անոր փոփոքութիւն:

Բազգն այնպէս բերաւ որ քեզ հանդիսիմ, այս կը տեսնեմ թէ ճիշդ բնուռածու ես. կուղե՞ս հարուստ ըլլով, և գեղեցիկ կին մ'ունենալ, մնացածն ինձ թող, ես ամեն բան կը կարգագրեմ:

Աշնուասիրտ հրեին այս պատմութիւնն ոյնքան անհաւատափ կը թուէր ինձ, որ կը կարծէի թէ կե-

րազէի: Բայց երկար ատեն շմացի վարանմանս մէջ խոստացայ, և չեմ կրնար բացատրել որ աստիճան երջանիկ կզգուցի ինքինքս, մինչ վայրիեւան մ'առաջ բոլորովին յուսահատութեան մատնուած էի:

Ռւստի թեռս հոն թողավ, ուրուն համար այլ եւս չէի կրնար հոգունենալ, հրեին հետ հեռացանք: Երկրորդ օրը այդ մեծահարուստ անձին ներկայացած էի, հաւնեցանձ, և չծածկեց թէ ճիշդ բնուռածըն էի:

Ամեն բան շուտ շուտ կը հետեւ էին իրարու, նշանառուութիւն, ամուսնական հանդէս, համայն երշանկութիւն, և ահա բեռնակիրն կը գառնայր կը լինէր յանկարծ իշխանազուն տղջկան մը ամուսին. կարելի՞ է հաւատաալ:

Հրեին՝ հետ ունեցած դաշնագրութիւնա ուրիշ բան չէր, բայց միայն 4000 ոսկի տալ նմա երեք ամս տուան մէջ, ոչնչ գումար մը, այն մարգուն համար, որուն աներոջը բոլոր հարստութիւնն պիտի կրնար ըստ կամա գործածել:

Զերկորորանելու համար չպիտի նկարագրեմ հանդէսը, որ այնքան շքեղ եղաւ, աննման իւր տեսակին մէջ, աննման ըստ ամենայնի: Միայն ոս շափ պիտի ըսեմ թէ՝ այն սրահն, յորում կատարուեցած մեր պսակի արարողութիւնն ապարտնաց մէջ միայն կարմիր է տեսնել: Հոն անթիւ ջահերու լցուեր բազմաճամակ սնդուսապատ կարասեաց վրայ կարծես ոսկի կը

սկուելն, ոսկի աշաց զօշտոփց, և
ազգ ազգ խնկոց քաղցրահաստ բռը-
մունք՝ կը փոխելին զմարդ աննկա-
բադրելի կեանքի մը մէջ, և այս
ամենուն հետ խորհիլ թէ տէր ես
այս ամեն ճախութեանց և չքնաղա-
գեղ կնոջ մը, ա՞հ, արդարեւ եր-
շանկութեանց երջանկութիւնն է,

Սակայն հաղիս թէ պառի ա-
րարութիւնն աւարտած էր, և
քաշուած էի առանձին սենեակ մը
այլ և այլ յուզումներէս հանդար-
տելու, և խորհելու քիշ մը թէ ինչ
էի քանի մը օր առաջ և ինչ եղայց,
ահա վրաս նուազում մ'եկաւ, և
սկսայ դարիանալ: Հազիւ երցոյ եր-
կու բառ աբուսանել ջուր մը խընդ-
րելու համար,

Բարեբազզաբար սենեկիս գու-
ռն կիսարաց լինելով, անսնուած
էի այս վիճակիս մէջ, ներս վաղե-
ցին աներս և նորադասի կինս, ի-
րենց իսկ ձեռք կը շւայցէն ինձ ա-
մեն խնամք. արդէն սկսուծ էին սի-
րել զիս գորովագոթ սկրով մը, և
ես կը խոսավոնիմ թէ աղմանի
չեի սցդքան սիրոյ, հեքս և թըշ-
ուառս:

Այլ փախանակ սթափելոյ,
նուազումն կտտարեալ եղու, ընդ
ազօտ կսցի տեսնել կնոջո ձեռք
քաղցրահաստութեան մը պատ տէ, ոյք
պարունակութիւնն յու զետով և սե-
հանդարու սրառվ մը կը որսէր ե-
րեսիս: Բայց չու շացաց այս քան խը-
նամաց և սթափեցուցիչ գարմանե-
առջեւ տակու շունչ առնուլ, և ո-
չա՛ կոթափիմ. . . .

Արգիսի սթափում . . . ամեն
թշ երա՛զ էր . . .

Երբ յոգնած դադրած մօյա
բային քովը, բեռանո մօտ ինկած
էի, քունը խրկեաստու ափինով
յափշտակած էր զիս և տարած յե-
րազոց աշխարհն: Անու շահառու-
թեանց սրսկումն որ կզգայի գիւնա-
ցըս վրայ, անձրեւոց կաթիլներ էին,
որ սկսած էին տեղալ տիսուր եր-
կինքի մը տակ:

Ավ երազոց, ով դառն յու-
ստիարակեան . . .

Դարձեալ թշուառ մ'էի: Ոտ-
քի երայ, վերասին ու սերուս վրայ
առի բեռը և սկսայ շարունակել
ճամքա:

Սկզիւ ունկընդիք: մի ծայրեր
զիս, կարելի չէ որ դուն ալ ու-
նեցոծ չըլլաս սցավիսի երազներ.
ո՞ կիսէ քանի քանի անգամներ
հարուստ եղած ես, և ոյժմ կը
միջթարուիս ինձ ողէս մացեալ փու-
ռաց քայցը միանգ ամոցն տիսուր յե-
շատաներով:

Եսցց զ սնէ այս երջանկութիւնն
մարդ չիրեար տանուլ մեր ձեռքէն,
ու թնմն քեանամք: այս, քուն քուն
ուրում միայն վայելն փառք և
իշխուստ թիւն ։

ԿԱՐԴԱՑԵՔ

ԼՈՂՑԵՐԻ այս թուոյն հետ մեր
Մեծայարդ բաժանորդաց կուզար-
կինք տեսակ մի նու էր, կաղանդի

առթիւ տրուածներէն չըլլովով հանդերձ այնքան հաճոյք և ուրախութիւն պիտի պատճառէ զոյն ընդունովներուն, — կը յաւամքոր երբեք իրենց կինաց մէջ չպիտի մունան ոչ զնուէրն և զնուիրատուն:

Այս նուէր բան մ'է, որ չուտուիր . . . հոգի ալ չունի . . . բայց կը շարժի եթէ շարժես, ոչ ամառ կը լլոյ, ոչ ձմեռ . . . գէպքրոյնովէս բերաւ որ այս օրերուս մէջ ըլլայ . . . ի՞նչ է: Չեմ, յուսար որ դիսնաք . . .

— Մառուլ:

— Բայց չուտուիր, ըսի:

— Օրացոյն:

— Զ գիտար, օրացոյց ամեն տունն կը լլայ:

— Խոյխան պայտիսի:

— Թա՛մամ' :

— Հազար ի՞նչ է:

— Մ'է պայմանաւ մը կը տեմ, եթէ վշտանա՞ոչ ես իրկած ըլլում ոչ գուն ընդունած ըլլաս:

— Եատ աղէկ:

— Իսէ թէ խօշըդ դայ, դու ալ իմ նուէրս խրկես:

— Ի՞նչ:

— Դամ:

— Իսէ որեմն հետքը օրութիւնս կը շարժես:

— Շամնորդագնոյն անդորրագերը, ըսի գնաց:

ԱՌՈՂՋԱԲԱՆԱԿԱՆ

Գ.

—

ՕՀԱՖՈԽԱԽԵՑԻՆ

Օդափոխութիւնը մեծ տեղ կը բռնէ առողջարանութեան մէջ. ասիկա չափուած և ձեւուած բան մ'է, խոսք ըստ վերցրներ:

Արդին բժշկութիւնը մէյ մը հիւանդութենէ ապաքինող մարդուն, մէյ մ'ալ հիւանդութենէն ազատնելու յոյս ցուցունող արաւածին կը սեփհականէ օդափոխութիւնը, բայց Լաղտեր ամենուն համար ալ աղէկ կը դանէ, մանաւանդ այն զբագէտներուն համար, որ անելիք մը մէջ օրերով վակուած կը մնան, և իրենց գրութիւններն գրունփակ կը կատարեն, որ նոյնպէս օդափոխութեան պէտք ունին:

Արդարնւ մարդէ աւելի՝ գըրտածք մը պէտք առնի օդափոխութեան, գրուածք մը օդափոխութեան չորչիւ կը լսայ դիրնալ, եթէ նիհար է, կը լսայ նիհարանալ, եթէ գէր է, սրովհետեւ չափազանց գիրութիւնն ալ վնասակար է, կաթուած կը հրաւիրէ. և եթէ, Ասուած մի՛ տրասցէ, գրութիւն մը կաթուածէ բռնուի, ի՞նչ աղեւանի կը լլայ, արիւն առնելու և որդրուկ վակիցըննելու է անոր գլխու կողմը և ոտքերուն, և խորհի՛ թէ

հիմակուան գրուածքներն ո՛չ գը-
լուխ ունին ո՛չ ո՛տք :

Ի բաց այսպիսի տիսուր խոր-
հըրդածութիւնք : Դառնանք մենք
մեր օդափոխութեան :

Օդափոխութիւն բառը կը նշա-
նակէ օդ փոխել, որպէս շապիկա-
փոխութիւն՝ շապիկ փոխել, և այս
օդ փոխելը օդահան գործիքի մը
միջոցու սենեկին օդը պարպելով և
անսր տեղը ու ընթաց զել-
լար, այլ ուրիշ քաղաքի մը ուրիշ
օդին այցելութեան երթարով . ուռ-
տի կրնանք օդափոխութեան տեղ
գործածել տեղափոխութիւն բառն
ալ . որովհետեւ օդը փոխուելուն
հետ ի միասին տեղն ալ կը փոխուի
իրը . կրնայ նաեւ ըսուիլ խելափո-
խութիւն, քանզի կիմայի աղդե-
ցութիւնը անուրանալի է, և ըն-
դունուած առնեն գիտնականներէ :

Զի երբ կիման մարմնոյն վրայ
կաղդէ, խելքն ալ որ մարմնոյն մէկ
անմիջական անդամն է մօքէն ծնա-
նելով՝ չը կրնար տպուորութիւն
չկրել կիմայի փոփոխութեամբ : Այս
պատճառին համար է որ շատ օդա-
փոխութեան գացողներ ենքը իրենց
առջի խելքով չեն դառնար, չէք
լսեր որ շատերը զդաւմ կը յայտ-
նեն ի դարձին :

Օդափոխութիւն բառին տեղ
կրնայ գործածութիւնաւենդ մարմ-
նափոխութիւն այսինքն՝ տեղափո-
խութիւն մարմնոյ, որովհետեւ երբ
օդափոխութեան երթառ, մարմնդ
ալ անցուշտ հետդ պիտի լուսիս,
քանզի յանկարծ պէտք կրնայ ու .

նենալ քեզի, ուստի և մարմնդ
տեղ փոխած կը լլայ : Եւ այս պատ-
ճառին համար կին մը՝ որ սենետ-
կէն խոհանոց կիջնայ՝ օդափոխու-
թիւն կամ մարմնափոխութիւն կա-
տարած կը լլայ, և սիրահար մը որ
շատիելով կը վաղէ իւր սիրեցն լցյն
քով, ցատկանարմագու խութիւն կը
կատարէ :

Ցատկանարմագու խութիւն շատ
տեղի կունենայ, բայց կոչ համար
յիշած մարմնափոխութիւննիս քիչ
կը պատահի, որովհետեւ խոհանո-
ցը լու և առողջ օդ մը չմատակա-
բարէր, սովորաբար կանանց տեղ
մուկերը կը կատարեն այդ օդափո-
խութիւնը, որոց չմատակար :

Այս զարմանալի առարելու-
թիւնը հինդ տարի առաջ բժշկի մը
հարցուցած եմ, որ խոստացած է
քիչ առենէն պատասխանել, և գեռ-
պատասխանած չէ . և արդարեւ
հինդ տարին շատ առեն չէ . բայց
գոնէ քիչ ըլլալէ ալ գագրած չէ :
Բայց ինչ որ է անզուշտ օր մը այս
հետաքրքրութիւննիս ալ կը յա-
գենայ :

Դանզ հիմա թէ օդափոխու-
թիւնն ի՞նչ պարագայներու մէջ կա-
տարելու է :

Մարմնական հիւանդութեանց
համար օդափոխութիւնն լաւ բան
մը լինելն հաստատենէն յետոյ՝ կը
մեայ ցուցընել թէ ո՛ր կողմերը ա-
ւելի օդտակար կրնան ըլլալ . և թէ
ընդունելի է ուրիշ տեսակ հիւան-
դութեանց համար ալ օդափոխու-
թիւն, որովհետեւ դրամական հի-

ւոնդութեանց համար ալ օդափոխութիւն կրնայ ըլլալ:

Մարմահանց հիւանդութեանց համար բժշկաց նշանակած վայրերն զարմանք կպատճառեն մեղ օրինակի համար կըսեն, եթէ հիւանդը արեան պակասութիւն ունի Գաաը գիւղ երթալու է, անշուշտ նաև համոզմամբ թէ Գաաը գիւղի կլիմայն տաք է և տաքութիւնը մարմանոյն մէջ արեան զօրութենէ յառաջ կուգայ, Աւկայն ասկէ չիւանեւիր թէ Գաաը գիւղ շառարիւն ունի, Գաաը գիւղ վուշի կրնայ ունենալ, նօտաս կրնայ ունենալ, ոդոյ ծանրութիւն կրնայ ունենալ, բայց արիւն, չենք կըրնար համոզւիլ այսմ, Անցեալ օր աչքովսիս տեսանք տան մը հիմը դնելու համար հողին մէջ բացուած վերքերն, որ խաղմայի հարուածները կը գործէն, և կը հաւտասաք կաթիւ մը արիւն անդամ չէր ելլիր այդ վերքերէն, հող, քար, կիր կտպին, քաւրչի կաորներ, սովորաբար ասանկ բաներ էին ելածներն:

Մենք կը խրատենք որ այս տեսակ հիւանդութեան համար Ակիւապ երթաւի, Այիլաւ այազմասի պէս բան մ'է Ակիւապ, կամ դարձ կուռայ կամ բարձ:

Հիւանդութենէ նոր ապաքինած հիւանդի համար կը խրատենք երթաւ Լանկաց. կամ Գաաը բաշ, կամ Այլապար. այս վայրերը սա առաւելութիւնն ունին եիւզնիւի երկիւղ չեն ձգեր, չեն իմանար իսկ թէ ինչպէս արագ կը գործեն.

Հարսերը իրենց կեսուները,

Փեսերը իրնեց զոքանչները, ժառանդորդք իրենց հարուստ հարերն կամ ազդականները, կնչմէն ձանձրացուղ երիկը, իւր կինը, երիկէն տժգոհ կիները իրենց երիկը աղատ են այս տեղերն ատանիլ յօդափոխութիւն, խնդիրն շուտով կը լուծուի, և տեղի չմար հմուտ թը ւաբանաց գիմելու, որ գործոց շատութեան պատճառաւ պարապ մացած են:

Ու ըշից հիւանդութեանց համար ուրիշ տեղեր երթալու է, բայց փորհարութենէ տանջուողը սիսմիքին երթալու է, պնդութենէ տառապողը նիւս եադի ին, որք կարիւյց մարդասէր լինելով, յոյժ կարի ալ հիւրասէր են:

Քանի այսինքն հինցած, բայց ոչ թէ թուականով այլ հիւանդութիւն վրայ հինցած հիւանդութիւններ ունեցողն թուզլա երթալու է, վերջապէս երթալու է այն տեղը, ուր ընդհանրապէս կերթան ամեն մահկանացուք, վրան բաց, օդասուն, ծառերով զարդարեալ այն տեղն, ուր ամեն մարդ գրուած է երթալու, և միւրազիմ կսպասէ, քանի որ կենդանի է,

Գրամական հիւանդութեանց համար տանը ձեզնացարկը երթալու է, ուր ամենէն ապահովին է պարտատէրներէն աղատ մեալու համար. Զեղնայտրկի բնակիչները կրնան քիչ մը նեղել այսպիսի պանդուխտ մը բայց փոյթ ընելու չէ.

Զմունանք ըսելու թէ՝ ըղեղի հիւանդութեան համար գրկի եր-

Թալու է:

Դիսգինեան առողջարանաթիւնը յաջորդ թուով պիտի խօսի դեղերու վրայ և անսնց բազալրու թեան եղանակին նկատմամբ, այսօք միայն սու շափ կըսենք թէ՝ դեղերուն ընտանիքը ընդարձակ է, և բազմաճիւղ:

Տուսականները կը բաժնու ին 6000000 ճիւղի, կենդանականները՝ 8000000, հանքայինները՝ 9000000, և անսնք որ վարէն պատրաստ կուգան, և որոց համար աղդարարութիւններն կըսեն թէ՝ մեծ բաներ են, և օփեօփայիք անուամբ մկրուած են, կը բաղկանան 12000000 ճիւղէ:

Ասոնց ամենուն վրայ զատ զատ պիտի խօսինք, և օր մալ պիտի խօսինք թէ ինչու համար առոնց ամենուն վրայ զատ զատ խօսեցանք,

Բնթերազներնիս չպիտի ձանձրանան, որովհետեւ ձանձրանալի ծուլութեան նշան է, և մեր ընթերցողները ծոյլ չեն.

Քսել է, բանի որ այդ շափ մի իննաւոր դեղերու վրայ պիտի խօսինք՝ միլիոնաւորի վրայ գործ ընտանլոց անուակէն ենք, և այս տեսակ մարդկէկ հասարակաստեղծ մորդոց տեսակէն ՀՊԱԼով, իրաւունք կարեկալենք պատիւ առնենքն, և վառւք՝ բժշկուան գիտութեան մէջ որում եմք և պիտի լինիմք յաւ էա վանաքի գաշտոնեաց թանաքի օժանդակութեամբ:

ՆՈՐՍԳԱՅԻՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԻ

Բժշկութիւնը վերջին տարիներուս մէջ մեծ յուածգիմութիւն ըրած է. զի վերջապէս հասկցուեցաւ թէ մարմինը հոգւոյ հետ անմիջական առնջութիւններն հոգւոյն շատ հիանդանթիւններն հոգւոյն հիւանդանթեանց բուժմանը կընան անքիլ, կամ մամաւաւնդ անհետանալ:

Այս անհերքելի ճշմարտութեան համարանի ունեցող բժիշկներ գուրս հանեցին այս վերջին տարիներու եւրոպիոյ բժշկական գործարաններն, ալ մարդկային կեանքը երկարելու ինդիրը անկիւն մը առանձնացած, բուօփէսէոններու աղմկայոյդ վէճերաւն ականջ կախելու գլուխունները շատոնց յայտնած է, կըսեն:

Մեր մայրաքաղաքն ոլ այդ համակերպի բժիշկներէն ունենալու պատիւն կը վայելէ. և հիմա պողառընակ շատ հիանդանթեր երկու օրուան մէջ իրենց նախկին առողջութիւնն կը վերատանսն շիշ մը գեղալ, զը կը բանեն, չե զլուի մը Ա. Պիրքով զը կը կարգան:

Բայց որովհետ ամեն գործ իւր անուելութիւնն կունենայ, այս նոր բժշկութիւնն ալ երբեմն անհասկացողութեան կը գտառապարտուի, ուստի և արդիւնքն կը լինի մերիւ-

նուազ կամ ուշ զգողի , և երբթալ կտրի յոյժ տխուր ,

Մասկալ օր հիւանդ բարեկառներէս մին , որ հէտիկ բաշտ կը լնակի , այս տեսակ բժշկի մը գիտելով շիշ մը զեզ և բուսիօն մը ծննդոց գիրքէն կընդունի , անչու շտանջինը խմելու երկրորդը քաղելու համար . բայց անուշաղբաթեամբ երկրորդը կիմէ , առաջինը կքաղէ և հետեւ թիւնը սա կըպայ որ հիւանդոթիւնը կծննդանայ ի մեծ զարմանս բշտրչին , որ շիշ մը գեղը պատրաստած էր , և ի մեծադուն տպառթիւն բժշկուհւոյն , որ երկրորդ տեղն մատակալարած էր ,

Կարծեմ մոռցանք յիշելու թէ սյունորբնակ բժիշկներն քօնխաւդասիօն ի համար , անչու շտանջուն պատճառու , ուզգակի իրենց ու հեաց կը գիմն , և երբ խնդրուի իրենցմէ այս ինչ կամ այն ինչ բրժիշկը առնուլ ի խորհրդակցութիւն որ սյունչ կամ այն ինչ թիւ տառնը կիմնին , անչու շտանջուն փողոցը , կը պատասխանեն . այս ինչը կամ այն ինչը անորոշ անուներ են լեզուաց քերականութեանց մէջ . ի նշ հարկ որաշեալը թողուլ , որ աւելի դիւրտ ըմբունիլի է , և երբթալ դիետ սննդուշին , որ անշուշտ յունութիւն մը կենթագրէ , թող որ այդ ըստ բժիշկներդ հին մէթօտին յարած են , և միայն մարմինը ուշադրութեան կառնուն , այն տպականելի արարածը զօր ծէրը պճնեց հոգւով :

Անուշաղբաթենէ ի՞նչ աղէտ-

ներ կը ծագին , . . . այսպէս , այնիւ ընթերցաղ . քիչ մասց հիւանդ բարեկամս զոհ երթար երկու տող զըմն և շիշ մը ջուրին որ՝ կըսէ թէ գեղին էր . գոնէ գեղահատ ըլլա՛ այդ գեղին , բայց կերերւայ թէ գեղահատաներն այս մօտա բժշկութեան մէջ մուտ չունին , պնդող եղած է թէ ելք ալ չունին , բնական է սյումոնես նէ կելլես , չմոնես նէ հոն կը մեաս , կամ ետ կը գաւանա :

Սակայն բարեկամէս երկրորդ այցելութիւնը , որ վերջապէս բուժեց զոյն իւր հիւանդութիւնն , կարծէ որ պատմեմ . լուարուք և ի միտ առէք :

Կոկինի և սիրաւն անենելի մը մէջ ենք , որ զարգաբռած է ծաղիկներով և շիշերով , զիրքերով և աթուաներով , կնիմով , մը և գորգերով , այր մարգով մը և ջուրի մը պատպիսով . մէկ կողմն երկու Աւետարեր ինկած , անուշաղբռութեամբ միւս կողմն երկու Ա. Գիրդ կայնած ուշաղբռութեամբ , որոց ամենուն մէջն անցնելով մեր պատուական բարեկամը կը յաւաշանայ միլուն բժշկին , որ եթէ ոչ գրկարաց գոնէ ժպիտ ի գէմն կընդունի զոյն . կը բազմին մերձ առ մերձ , ամժամներու վրայ որ կիրերան , բժշկին յառաջդիմութեան մէկ նշանն է այս կը մերձենայ . և բժշկուհին , մին լուզիթ մը ի ձեռքին ունի , միւսն ոսկեղօծ գիրք մը , մին պատրաստ լուրն ի գիր վերածելու և ստորադրելու , միւսն՝ անհամբեր՝ մրանջելու գողուրիկ ձայնիւ մը . Այսուած

ոտեղծեց երկինքն թու երկիրը, ու
ինչ որ անոր մէջ կան, այս մեր պի-
րուն սենեակն ալ, զիս ալ ամաւսինս
ալ, քեզ ալ և քու հիւանդ ըղեղդ
ալ, որ զբեզ առաջնորդեց հոս . . .

Բայց յանկարծ Ցիրով բժիշկ
կյափշտակէ զիւր կին իւր խորհուր-
դէն հիւանդին հարցնելով.

— Դեղեմն օգուտ մը շարտադ-
րեցի՞ս :

— Հիւանդն կը պատասխանէ .
Ախարիունք մը տեղի ունեցաւ տօր-
թէու :

— Բնչ կըսէք :

— Յանկարծ բժշկուհին կակսի
խօսիլ առ հիւանդն . Ցեսէք ի էշ
գեղեցիկ է սա կառըն . « Ասաւած
պիտի սիրէ զանոնք որ զինքը ու-
զիզ պրով բնառեն » :

— Հիւանդն . Այս տիկին :

— Բժիշկն : Բնչ սխալ, սա իմ
հարցմանս ալ պատասխանէիք :

— Դարձեալ բժշկուհին . Եւ
սա խօսքն, Ետեւէս եկէք, չէ մի
մի որ ես ձեր առջեւէն կերթամ
կոր . . .

— Հիւանդն . Հիանալի է տի-
կին :

— Բժիշկն . Կարծեմ գեղերը
սխալ առեր էք :

— Հիւանդն . Այս . հիանալի է
տիկին :

— Բժշկուհին . Եւ երանի՝ ա-
նոր որ կը հետեւի Յիսուսին :

— Հիւանդն . ԱՇ, այս երանի

գեղն սխալ առած ըլլալու էք :

— Հիւանդն . ԱՇ սաքթէօս :

— Բժշկուհին . Ինչ ո՛չ . երանի
ՀՅ անոր որ կը հետեւի Յիսուսին :

— Հիւանդ . Այս տիկին,

Բժիշկն . Ուրիշն սխալ առած

էք գեղին :

— Հիւանդն . Տօքթէօս . . .

— Բժշկուհին . Այնպէսչէ : պա-

րուն . Յիսուսի հետեւելու ենք,

— Հիւանդն . Տիկին . . .

— Բժիշկն . Ուրիշ գեղ մը պի-
տի տամ :

— Հիւանդն . Տօքթէօս . . .

— Բժշկուհին . Շնաս բարի էք
պարուն :

— Հիւանդն . Ա հ տիկին . . .

Բայց տեսնելով Տոքթօռը կոր
ոց բժշկական այցելութիւնն ար-
գէն իւր օգուտն ունեցած էր թէ
հոգեւորապէս և թէ մարմնաւորա-
պէս, վութայ նիսոր վերցնել նոր
գեղ մը տալով, որ նոյնպէս գեղին
էր . և այս շատ բնական է . գեղ և
գեղին նմանածայն բառեր են :

Երեկ մէկ ուրիշ բարեկամա ալ
գացած է այդ բժշկին . և մինչեւ
իրիկուն տպարինած : Այս նոր բը-
ժշկութիւնն հրաշքներ Էգործելու
կարող է . և Դիոդինէս կը խրատէ
իւր ընթերցողներն օգտիլ անկէ :

ԱԶԳԱՅԻՆ

ԱՅԵՑՋԱՆ

Մեր մէջ շատ ինդիրներ՝ որ արտաքուստ դիտուելով ահապին կերեւին՝ ըստ ինքեան ոչինչ են դըրեթէ. և եթէ խուն ինչ համբերութեամբ ծափ ոք և քննէ զոյնս՝ աւելի նկատումներ յիշեւան կուգան քան թէ ազգային օգուտները Այս ինդիրներու կարգէն է Արեգայի մը ինդիրը որ կոթուղիկոսի ընտրութենէն ի վեր հրապարակին վրայ և պաշտօնական գիւանուանց թղթերու մէջ կը յաւզուի : Ի՞նչ է ըրած ։ ։ իր կրօնական մէկ կարծիքըն է յայտնուծ աշխարհականի մը գէմ՝ յենըլ Ազգ. պատմութեան վրայ : Յիշաւի չարժեր բնաւ այդ չափ կարեւորութիւն ընծայել անոր տարիներով զրազիլ, և սղաճառ տալ այնու որ մինչեւ անգամ քաղաք մը երկպառակի, կանայք իսկ ինդիր ընեն զայն :

Ի՞նչու գրական հաւատաքըննութիւն կը բացուի . ի՞նչու թոյլ չարուի որ մեր պատմութիւնը երթին երթեան մեր սխաները ծազրէ ի՞նչու գոտապարտութեան մէջ կը նետուի գրուած մը՝ որուն պատասխանել պէտքէր հրապարակաւ և ոչ թէ գրիչը հալածել տարիներով : Մեր կաթուղիկոսական ինդիրը . կուսակցութիւններէ զերծ նը-

կատելով. միշտ պատմութեան խընդիր է . Ազգ. դատ է . Ո՛վ ը գիտեթի թէ մեր քաղաքական և պաշտօնական տկարութիւնները պատճառ տուին որ կենսական ինդիր մը պատմութիւն մը աղետաւոր վախճանի հասաւ : ինդիրն իր ողարզութեան մէջ միշտ այսպէս է : նաեւ անոնց համար ալ՝ որ կուսակցութեան խմբով իսկ շաղուած լիսին Ռւսիի , եթէ յիրակ պէտք եր բան մը ընել . մեք պարտէինք չնորհակալ լինել այդ Արեղային, որ գլուխը շարժեց և յանուն եկեղեցւոյ ինքնօրինութեան՝ վաշշուպանողական գրեց այն ատեն մինչ բարձրաստիճան հոգեւորականց համար գրուեցաւ . թէ ինդիրը մահացնելու դաւաճանութուն ձեռք երկարած են : թող տանք որ անկախ բնաւորութիւններ զարգանան ազգին մէջ . թող տանք սուր չգրիչներ արշաւանքներ ընեն : Պատմութիւն ու ազագայ ունինք . գոնէ վախնանք անոնցմէ :

Կ. Պալխ 10 Ապրիլ

1888

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ազգ. Վարչութեան խառն ժողովոյ որոշական Ցրապիզոնի պատրիարքական փոխանորդ. կարգեալ Արականնեան Արժ. Ներսէս Հվարդա-

պեա Զատկական տօներէն յետոյ
պիտի մելինի յիւր պաշտօն :

* * *

Զատկական տօներուն առթիւ
Կրօնական և Քողաքական ժողով-
ներն և ցեսուչ խորհուրդը իրենց
նիստելն գագրեցուցած են :

* * *

Աւրախութեամբ կրլոենք թէ
Վեհ. Սովորանը Շէֆագալթի երրորդ-
տասիճանը Հորհած է Աղն. Տիկին
Աղաւնի Ցէրունեամի, Քոյր Վահմ.
Յակոր փաշանց Դադազեանի :

* * *

Անցեալ կիւրակէ Հայկական
կրծարանի ուսումնաւարտ սանուց
վկայականաց բաշխման հանդէսն
աեզի ունենալով ի Թատրոն Բարե-
սէր ընկերութեան Օրթագիւղի, հե-
տեւեալ պարոնայք ընդունեցան ի-
րենց վիայականներն :

Աղեքսանդր Մ. Մալխազունի Ֆի-
լիպէցի :

Յարութիւն Փափազեան Պօլսեցի
Միհրան Տէմիրճեան Խարբերդցի
Արամ Աքիկեան Պօլսեցի
Նուպար Յակոբեան կեսարացի
Շահէն Ալսոնեան Պօլսեցի
Միհրտիչ Դափամաճեան Պօլսեցի
Վահրամ Օհանեան Պօլսեցի

* * *

Կրօնային Խօսնակ անուն թեր-

թըն սկսաւ հրատարակիլ, Յաջոպո-
թիւն կը մաղթենք :

* * *

ՀՐԱԺԱՐԱԿԱՆ Ս. ՊԱՏՐԻԱՐՔԻ

Նախարարաց Խորհուրդն ըն-
դունելով Ամեն Ո. Պատրիարքի հր-
ատարականն ի պատրիարքութիւնէ
կ. Պոլսոյ վաւերացուցած է Ն. Ա-
մենապատութեան ընտրութիւնն
յաթու Պատրիարքութեան երո-
սողիմայ :

Այս որոշում մատուցուած է
աւզեկագրով մը Վեհ. Սովորանին

* * *

Երկուշարժի օր Ամեն. Ո. Պատ-
րիարք Հայրն կսեմ. Մաքուտ Սի-
մոն պէյի ընկերակցութեամբ Բարձ.
Մեծ եղարքուի ուպարանքը գնաց
ի Գորսուչչմէ և տեսակցեցաւ Ն.
Բարձրութեան հետ :

ԶՈՒՄՐՃԱԼԻՔ

—○○○—

Բարձրաստիճան անձ մը իւր
մէկ սիրելի բարեկամին հետ նստաւ
արմաւ ուտելու, երբ կուտէին
բարձրաստիճանն իւր կերած ար-
մաւներուն կուտերը գաղոնարար
բարեկամին կուտերուն կը խառ-
նէր : Երբոր աւարտեցին, ըստ նմա-

— Բարեկամ . որչափ ոկրամոլ էք տեսէք բոլոր արմաներն ալ դուք կերեր էք , ամբողջ կուտերն ալ ձեր առջեւն են :

— Բարեկոմը կը պատաժիանէ . արդարեւ . բայց գուք ինչ աւելի ոկրամոլ եղած ըլլազու էք , որով հետեւ կուտերն ալ ի միասին կերեր էք :

* *

Թագաւոր մը ծովածալ շրջագայած միջոցին զր տեսնէ գպրացական տղեկ մը , գիրքն անո թիմն տակ տուն կը գտանար , տղուն աղքատիկ հանգերձներն անոր սիրաց կը շարժին , ուստի զայն քովը կանչելով կուտայ անոր ոսկի մը . ըսելով որ մօրը տանի :

Տղան չուզեր լնդունիլ , որովհետեւ , կըսէր , մայրս պիտի կողծէ թէ գողցած եմ :

Յայնժամ թագաւորն ըստ . ըսէ մօրդ թէ թագաւորը տառաւ :

Տղուն պատախանեց . այն առեն ընաւ չպիտի հաւատայ , որովհետեւ թագաւորը այսափի չտար , շաս կուտայ :

Տղուն այս հնարինաց խօսքին քրայ թագաւորը իւր նուելն կը բաղմապատիէ , և մոտմի կը գոմի անոր ճորտաբամութիւնն :

* *

Բարեսիրու մարդու մը կինն այնքան յաճախ այցելութիւններ կուտար գրացեաց և բարեկամաց ,

որ ոռքա այլ եւս ձանձրանտլով՝ զիմեցին մնոր ամուսնոյն , գանգատեցան և խնդրեցին որ լոէ իւր կոսջը քիչ մը նուազ ձանձրածուցիչ լԱՄԼ :

Ամուսինն պատախանեց . խընդիմով պիտի կոտարեմ , առաջին մնացամ որ առնը մէջ պինքը տեսնելու պատիւն ունենամ :

* *

Կոմա մը յանակնեալս յիւր բընակութիւնն համանելով . կը տեսնէ զանեկապանն իւր զարդարունաց սենելին մէջ :

— Ի՞նչ , կը համարձակիս տկուանելով . մաքրել իմ խոզոնակովու :

— Սպասաւորն առողջ վրդավճան կը պատախանէ . բայց պարոն անհօգ եղէք , նախ լուացի զայն :

* *

Ցէր մը իւր ծառային կրսէ , երբ պարսիզին այն ինչ ծառին վըրայ երկու ագուաւ ի միասին տեսնես , իմաց տուր ինծի , թէ իսկ քունիս մէջ ըլլամ . որովհետեւ այդ կը նշանակէ թէ նուեր պիտի ընդունիք ժանօններէ :

Ծառայն այս չպատուերին կը ըրայ միշտ կվիսէր նշանակեալ ծառն , որպէս զի տիրոջը հաճոյք տոթելու երջանկութիւնն ունենայ , և արդարեւ օր մը տեսաւ երկու ագուաւ ի միասին ոյդ ծառին վրայ :

Անմիջապէս վազեց տիրոջը ծա-

նու ցոնելու , որ աճապարեց գալ տեսնել թէ արդարեւ ճշմարիտ էր բայց մինչեւ որ նա եկաւ , ագռաւ մէկը թռած էր արդէն : Յայն ժամ զայրանալով աղէկ մը կը ծեծէ իւր սպասաւորն , որ ի զաւր կազազակէր թէ սուտ չէր խօսած , և թէ ագռաւներէն մին թռած էր :

Մակոյն նոյն երեկոյին այդ բարկացոտ տէրն նուէր մը կնդունէր իւր մէկ հեռաւոր բարեկամէն : Ծառայն դայն տեսնելով , ըստ սիրոջը .

Ռւրախ եղիք ոի տեսած ագռաւնիդ միակ էր , և ահա նուէր կնդունիք եթէ երկուք լինէր , ձեծ պիտի ուտէիք .

* *

Գրիգոր անուն աղքատ տղոյ մը . առաւ ոտ մը ստիպեալ առանց նախաճաշի գալրոց երիթալով , դասարանին մէջ կառաջարկէր գասատն խել մը հայերէն խօսքեր , որոց դողլիերէնը կինդրէր , և այս կերպով հարցուց աշակերտի մը .

— Անօթի՞ ես թէ ծարաւ . որիալ պատասխան մը առնելով , առաջարկեց այս աղքատ տղուն . ըսէ դուն Գրիգոր ճիշդը .

— Պատասխանեց . թէ անօթի եմ , թէ ծարաւ , ջուրն ալ սախան չըերաւ .

* *

Մարդ մը հարցուց աղու մը թէ Բնչ է անոնդ .

— Անիմ երեք Շանուն պատասխանեց աղան , որոց երկուքը առօքեայ իսկ երրորդը Յայտնեամի . և այս կրտս անուններս իրենց մասնաւոր տեղերն ունին .

— Զարմանալի բան մարդ մը Բնչպէս կարելի է երեք անուն ունենայ , որոնք գործածելու մասնաւոր տեղերը ունենան .

— Այս , պատասխանեց աղան ցերեկը մազազան , ծօ՛անտոն , երեկոյները տան մէջ՝ սննոօն : բայց կիշակի օրեր լնկերսւթեան ժողովն մէջ՝ միւսիւ անժուան կը ճանչցուիմ .

— Կրաւունք ունիք .

ԱԶԴ

Լապտերի առաջին թիւէն մինչեւ 17 րդ ժմիւը կը գտնուի միայն մեր տպարանն , կը վաճառուի ի գին 23 գահեկանի :

Դաշտ աշխատ կ

ՏԵՐ ԵՎ ՏՆՈՐԵՆ - ԱՐԱՄ ԱՇՃԵԱՆ

Կ ԳՈՒԽՈ ՏՊԱԳՐ. ԱՐԱՄ ԱՇՃԵԱՆ
ՆՈՒՄՈՒՅՆԵԱՆ ԽԱՆ ՎԵՐԻ ՑԱՐԻ ԹԻՒ 7

معارف عربية تشارتر جلستان رخصصة

نویسنده







